

ներքոյ զորմովք խորանին պատեալ պսակեին. սոյնպէս եւ արտաքոյ կազմեին ի ներքոյ կուռ վառեալք, եւ ի վերոյ հանդերձք զգեցեալք պատրաստեին: 12 Իսկ թագաւորն Պապ համարեր ի միտս իւր՝ թէ ի պատիւ ինչ նորա զայն առնիցեն: 13 Եւ մինչ դեռ յընթրիսն<sup>1</sup> ուտեր, սակրաւոր զաւրթն ի թիկանց կուսէ նորա կարգեալք պսակեալք կային շուրջ զնովաւ յամենայն կուսէ: 14 Իբրեւ ընդ գինիս մտին, որպէս զառաջին ուրախութեանցն նուազն մատուցին արքային Պապայ, եւ առ հասարակ թմբկահարք եւ սրընգահարք, քնարահարք եւ փողահարք իւրաքանչիւր արուեստաւք պէսպէս ձայնիւք բարբառեցան: 15 Եւ վահանաւոր լեզեռնին հրաման ետուռն. եւ մինչ դեռ թագաւորն Պապ զուրախութեան գինին ուներ ի մատուսս իւր, եւ նայեր ընդ պէսպէս ամբոխ գուսանացն, ահեակ ձեռամբն յարմուկն՝ յոր<sup>2</sup> յեցեալ բազմեալ էր՝ ուներ տաշտ ոսկի ի մատուսս իւր. իսկ աջ ձեռնն եղեալ էր ի դաստապան նրանին՝ զոր կապեալն էր յաջու ազդերն իւրում. եւ մինչ դեռ բերանն ի բաժակին էր յըմպելն, եւ աչաւքն յառաջ կոյս պշուցեալ հայեր ընդ պէսպէս ամբոխս գուսանացն հրաման լիներ ակնարկելով զաւրացն Յունաց: 16 Եւ լեզեռն սակրաւորքն երկու ի թիկանց կուսէ կային ի սպասու ոսկիկմբէ վահանաւքն, յանկարծաւրէն կից ի վեր առեալ զսակուրսն, զարկանէին թագաւորին Պապայ. մին կշիռ զուկն հարկաներ սակրաւն, եւ միւսն եւս սակրաւորն զաջ թաթ ձեռնին՝ որ կայր ի վերոյ դաստապանի նրանին՝ հարկաներ, կտրեր եւ ի բաց ընգենոյր: 17 Անդէն ի բերանս տապալէր թագաւորն Պապ. եւ գինին տաշտին եւ արիւնն պարանոցին նովաւ հանդերձ ի վերայ բաժակալ սկտեղն անկաներ առ հասարակ, եւ անդէն սատակեր թագաւորն Պապ: 18 Ընդ շփոթելոյ տաճարին խռովութեան՝ Գնէլ տեր զաւառին Անձեւացեաց յոտն կացեալ յիւրմէ բազմականէն, հանեալ զիւր սուսերն՝ հարկաներ զմի ի լեզեռնաց անտի սպանաներ, յայնցանէ՝ որ հարին զթագաւորն: 19 Ապա Տերենդ զաւրավարին Յունաց զիւր սուսերն հանեալ ածեր, տարակաց ի գլխոյն Գնելոյ զսկաւառակն գլխոյն ի վերայ աչացն ի բաց ընգենոյր: 20 Եւ այլ ինչ ոք ոչ կարաց յանդգնել ասել ինչ ընդ նոսա եւ ոչ ինչ:

ԳԼՈՒԽ ԼԳ.

1 Յաղագս որ ինչ խորհեցան ի յետոյ իշխանքն Յայոց, ապա անցին կացին լում:

2 Եւ ժողովեցան եկին ամենայն իշխանքն Յայոց մեծամեծք ի մի վայր ի միասին, եւ Մուշեղ սպարապետն եւ Յայր մարդպետ, եւ ամենայն իշխանքն ասէին. Զի՞նչ արասցուք կամ զի՞նչ գործեսցուք, խնդրեսցո՞ւք զվրէժ թագաւորին մերոյ՝ թէ ոչ: 3 Եւ ապա հաստատեցաւ այս բան ի խորհրդեանն, եւ ա-

1 *Յերկուս օրինակս*՝ ընթրիսն ուտեր

2 *Օրինակ մի*՝ յորմս